ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
Հեռ.՝ 589080
Ֆաքս՝ +374 060 621 734
www.mud.am
E-mail:info@mud.am

01/15.1/4624-14
16.09.14թ

Ձեր N———— առ————

ՀՀ Արագածոտնի մարզպետ
պարոն Սարգիս Սահակյանին

ՀՀ Կոտայքի մարզպետ
պարոն Արամ Հարությունյանին

ՀՀ Արարատի մարզպետ
պարոն Ռուբիկ Աբրահամյանին

ՀՀ Շիրակի մարզպետ
պարոն Ֆելիքս Ցոլակյանին

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Աշոտ Ղահրամանյանին

ՀՀ Տավուշի մարզպետ
պարոն Հովիկ Աբովյանին

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
պարոն Ռաֆիկ Գրիգորյանին

ՀՀ Վայոց Ձորի մարզպետ
պարոն Էդգար Ղազարյանին

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Արթուր Նալբանդյանին

ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ
պարոն Աշոտ Մարդյանին

Հարգելի պարոնայք

Հայաստանի գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումների շրջանակներում, ՀՀ քաղաքաշինության նախարարության նախաձեռնությամբ, ՀՀ պետական բյուջեի միջոցներով մշակվել և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի օգոստոսի 29-ի N229 հրամանով հաստատվել ու կիրառման է ընդունվել փոքր և միջին ձեռնարկությունների (այսուհետ՝ ՓՄՁ) ենթակառուցվածքի օբյեկտների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կատալոգը՝ նշված օբյեկտների սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած աշխատանքային նախագծերով, ինչպես նաև դրանց շինարարական գործունեության իրականացման ընթացքի վերաբերյալ գործնական խորհրդատվական ձեռնարկը՝ տեքստային և պատկերային նկարագրությամբ:

Կատալոգում ներառվել են թվով 5 ՓՄՁ օբյեկտների (պահեստների՝ 1500քմ, ջերմատների՝ 1000քմ, գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամասերի, սառնարանային տնտեսության օբյեկտների և չորանոցների՝ 500քմ սահմանային մակերեսներով) նախագծային առաջարկներ՝ դրանց սխեմատիկ հատակագծերով, ճակատային լուծումներով, հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներով և նախագիծը բնորոշող այլ անհրաժեշտ տեղեկատվությամբ: ՓՄՁ օբյեկտները նախագծվել են մոդուլային համակարգի կիրառմամբ (մոդուլների բլոկացման հնարավորությամբ), ինչը թույլ է տալիս կառուցել տարբեր չափի օբյեկտներ՝ դրանց մեծությանը համապատասխանող անհրաժեշտ ինժեներական համակարգերի հաշվարկների ներառմամբ:

Կատալոգի ներդրումը հնարավորություն կնձեռի կառուցապատողին խնայելով զգալի միջոցներ և ժամանակ, շրջանցել նախագիծ պատվիրելու և այն սահմանված կարգով հաստատելու փուլերը, ինչը կնպաստի հանրապետությունում բարենպաստ գործարար միջավայրի ստեղծմանն ու ներդրումային գործընթացի խթանմանը, միաժամանակ հանդիսանալով երկարաժամկետ տնտեսական աճի հիմնական գրավական:

Կարևորելով նշված նախաձեռնության դերը կառուցապատման գործառույթներից օգտվողների սպասարկման որակի բարձրացման խնդրում, Ձեզ են տրամադրվում ՓՄՁ օբյեկտների կատալոգն ու ձեռնարկը՝ էլեկտրոնային կրիչներով և 50-ական տպագիր օրինակից, ինչպես նաև կատալոգում ներառված օբյեկտների նախագծային փաստաթղթերը՝ էլեկտրոնային կրիչներով Ձեր մարզի համայնքներին տրամադրելու նպատակով:

Խնդրում եմ Ձեզ տրամադրված նյութերը տեղադրել մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ դրանց վերաբերյալ բնակչության իրազեկվածության ուղղությամբ:

Առաջարկվում է նաև հանձնարարել մարզպետարանի համապատասխան ծառայություններին՝ ապահովել ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ճարտարապետության վարչությունից (հեռ. 060 621 730) վերը նշված կատալոգի և ձեռնարկի տպագիր օրինակների ստացումը:

Միևնույն ժամանակ տեղեկացնում եմ, որ կատալոգը, դրանում ներառված ՓՄՁ օբյեկտների նախագծային փաստաթղթերը և ձեռնարկը տեղադրված են ՀՀ քաղաքաշինության նախարարության ինտերնետային կայքում (www.mud.am):

Առդիր՝ 2 էլեկտրոնային կրիչ:

Հարգանքով՝

Նարեկ Սարգսյան

*Կատարող՝ ճարտարապետության վարչության պետ*
*Նշան Մարտիրոսյան (հեռ. 060 621-730)*

7486
22 09 2014թ.